

Հայտարարություն «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրինագծի կապակցությամբ

Մայիսի 17, 2010

2010 թվականի մայիսի 12-ին ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունը ներկայացրեց իր մշակած «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրինագիծը, որն այնուհետեւ որոշ փոփոխություններով հավանության արժանացավ ՀՀ կառավարության 2010 թվականի մայիսի 13-ի նիստում, որտեղ որոշվեց նաեւ օրինագիծը համարել անհետաձգելի եւ սահմանված կարգով ներկայացնել ՀՀ Ազգային ժողով:

Օրինագիծը ներկայացնելու հանգամանքները եւ դրա բովանդակությունը մի շարք հարցեր եւ մտահոգություններ են առաջացնում: Մասնավորապես՝

1. Օրինագծի մշակման նման հապշտապությունն ու այն անհետաձգելի համարելը պատճառաբանվում է Հայաստանում թվային հեռարձակման անցման եւ այդ գործընթացի իրավական կարգավորման անհրաժեշտությամբ: Այս դեպքում անհասկանալի է մնում ներկայացված փաստաթղթի ձեւաչափը. դրանում պարզ չեն երեւում, թե կոնկրետ ո՞ր դրույթներն են ենթարկվել փոփոխության, հանվել կամ լրացվել, ինչը խոչընդոտում է կարճ ժամանակում արդյունավետ հանրային քննարկումներ կազմակերպելուն: Միաժամանակ, ԱԺ պատգամավորները նույնպես հնարավորություն չեն ունենա մանրամասն ուսումնասիրել օրենքի փոփոխությունները:

2. Ընդհանուր առմամբ օրինագծի բովանդակությունը չի արտացոլում այն աշխատանքները, որոնց իրականացման համար անհրաժեշտ էր 2 տարի: Ավելին, նախնական վերլուծությունը ցույց է տալիս, որ այս օրինագիծը կարող էր մշակվել եւ ներկայացվել դեռեւս 2008 թվականին, երբ գործող օրենքով նախատեսվում էին մի շարք հաճախականությունների օգտագործման լիցենզավորման մրցույթներ: Սա մեկ անգամ եւս հաստատում է մեր այն պնդումները, որ «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին օրենքում» 2008 թվականի սեպտեմբերի 10-ին կատարված լրացումը, որով 2 տարով դադարեցվեցին հեռուստառադիոհեռարձակման լիցենզավորման մրցույթները, ոչնչով հիմնավորված չէր: Լիցենզավորման մրցույթների կասեցումը մեծ վնաս հասցրեց ՀՀ հեռարձակման շուկայի բազմազանությանն ու մրցակցության սկզբունքներին: Օրինագծի բովանդակության ուսումնասիրությունից պարզ չեն դառնում այն կարեւորագույն եւ նոր մոտեցումները, որոնց մշակման պատրվակով ընդունվեց հիշյալ լրացումը: Այնինչ վերջինս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի «Մելտեքս» ՍՊԸ-ի («Ա1+» հեռուստաընկերության) գործով 2008 թվականի հունիսի 17-ի որոշման, ինչպես նաեւ ԵԽԽՎ մի շարք բանաձեւերի, այդ թվում՝ 1620 բանաձեւի կատարման խոչընդոտ դարձավ:

3. Չնայած օրինագիծն առաջարկում է մի շարք նոր հասկացություններ (մուլտիպլեքս, մուլտիպլեքսոր, հեռարձակման թվային ցանց եւ այլն), այնուամենայնիվ, այն չի պարունակում

թվային հեռարձակմանը մասնակցող սուբյեկտների միջև հարաբերությունների եւ թվայնացման գործընթացի կարգավորման մեխանիզմներ: Հենց այդ դրույթները պետք է լինեն օրինագծի եւ թվային հեռարձակման անցման հայեցակարգի հիմնական նորամուծությունները, որոնցով կարող էր ինչ-որ կերպ արդարացվել լիցենզավորման մրցույթների երկամյա դադարը:

4. Թե՞ օրենքի նախագիծը, և թե՞ ՀՀ կառավարության 2009թ. նոյեմբերի 12-ին հաստատած՝ «Հեռուստատեսային հեռարձակման թվային համակարգին անցման» Հայեցակարգը, չեն ներառում նախատեսված սոցիալական փաթեթի ձեւավորման սկզբունքները, դրանցից բխող թվայնացման անցման դեպքում հեռուստառադիոընկերություններին տրամադրվող լիցենզիաների տեսակները և համապատասխանաբար՝ այդ լիցենզիաների տրամադրման հիմքերը: Նախագծում ընդգրկված չեն հեռուստառադիոընկերությունների կողմից պահանջվող ներդրումների կառուցվածքը, ինչպես նաև մի շարք կարևոր այլ հարցեր:

5. Պատճառաբանվելով հեռարձակման թվայնացման օրենսդրական դրույթների ամրագրման անհրաժեշտությամբ՝ նախագիծը, այսուհանդերձ, պարունակում է նաև վերջինիս ընդհանրապես չվերաբերող այնպիսի դրույթներ, որոնք բազմիցս դրվել են քննարկման, քննադատվել են հանրության կողմից եւ մերժվել խորհրդարանում: Օրինակ, նախագծով (հոդված 26) Հանրային հեռուստառադիոընկերությունում առեստրային գովազդի սահմանափակումը մեղմացվել է, եւ այժմ՝ «(...) Հանրային հեռուստառադիոընկերությունում առեստրային գովազդը չպետք է գերազանցի ընդհանուր հաղորդումների յոթ տոկոսը», նախկին՝ 5-ի փոխարեն եւ հանվել է Հանրային հեռուստառադիոընկերության հաղորդումներն առեստրային գովազդով չընդհատելու պահանջը: Այս փոփոխությունն անընդունելի է, քանի որ հասարակությունն իրավունք ունի ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի հիման վրա ստեղծված Հանրային հեռարձակողի հաղորդումները դիտել (լսել) առանց գովազդային միջարկությունների:

Ընդ որում, հասարակական կարծիքին հակառակ, մեղմացվում են գովազդին վերաբերող այլ սահմանափակումներ եւս (հոդված 60, կետ 11):

6. Ինչպես հեռարձակման ոլորտի կարգավորմանը միտված նախորդ օրինագծերը, այս նախագիծը եւս փորձում է հարմարվել արդեն իսկ առկա իրողություններին: Այսպես, օրինագծի 47-րդ հոդվածով սահմանվում է, որ «Թվային հեռարձակման ցանցի միջոցով հեռարձակում են իրականացնում հանրապետական սփռման (...) Հանրային հեռուստառադիոընկերության երկու հեռուստածրագրեր (հեռուստաալիքներ), որոնցից մեկը՝ ընդհանուր ուղղվածության, մեկը՝ հոգևոր-մշակութային»: Ակնհայտ է, որ այս դրույթն ընդամենը օրենսդրորեն ամրագրում է ՀՀ-ում արդեն իսկ գործող երկու հանրային հեռուստառադիոընկերությունները՝ չառաջարկելով հանրային հեռարձակողի զարգացման նոր ուղիներ: Ավելին, նույն հոդվածում սահմանելով 18 պոտենցիալ հեռարձակողների ուղղվածությունները՝ նույնպես, ըստ էության, ամրագրվել է առկա իրավիճակը: Իսկ գործող օրենքի 48-րդ՝ «Հաճախությունների ցանկը» հոդվածը հանելը (ըստ դրա ՀՌԱՀ-ը տարեկան առնվազն մեկ անգամ հրապարակում էր հաճախությունների ամբողջական ցանկը և հայտարարում ազատ (չգրադեցված) հաճախությունների մրցույթ) հեռարձակման ցանցը սահմանափակում է հիշյալ 18 հեռարձակվող ալիքներով, ինչն իր հերթին նշանակում է, որ

օրինագծի ընդունման դեպքում թվայնացման գործընթացը կհանգեցնի բազմազանության նվազման, եւ պարզ չէ, թե անցումային փուլի ավարտից հետո ինչպես են օգտագործվելու թվային հեռարձակման ռեսուրսները: Հարկ է հիշեցնել ԵԽ Նախարարների կոմիտեի (2003)9 Հանձնարարականը, ըստ որի՝ թվային հեռարձակման անցումը չպետք է կատարվի բազմազանության աստիճանը նվազեցնելու հաշվին: Նույն սկզբունքն է արձանագրված նաեւ մի շարք այլ կարեւոր փաստաթղթերում, մասնավորապես՝ Հայաստանում Ժողովրդավարական հաստատությունների գործունեությանը նվիրված՝ ԵԽԽՎ 1643 (2009) բանաձեւում:

Նախագծի վերոհիշյալ՝ 47-րդ հոդվածում նշվում է, որ թվային հեռարձակման ցանցի ստեղծումը, պահպանումն ու շահագործումն իրականացնող կազմակերպությունը եւ նրա գործառույթները սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ: Ելնելով իրավական որոշակիության սկզբունքից՝ նպատակահարմար էր նախագծին զուգահեռ ունենալ նաեւ կառավարության որոշման նախագիծը, որպեսզի ապահովվեր իրավական եւ տնտեսական կանխատեսելիությունը:

7. Միեւնույն ժամանակ, օրինագծում լուծում չեն տրվում այն կարեւորագույն խնդիրներին, որոնք հետեւողականորեն մատնանշվում են մի շարք լրագրողական, ինչպես նաեւ միջազգային կազմակերպությունների կողմից:

Այսպես՝ օրինագծով փոփոխություն չի մտցվել արբանյակային հեռարձակմանը վերաբերող 23-րդ հոդվածում: Դրա հնարավորությունը շարունակում է կախված մնալ Հայաստանում եթերային հեռարձակում ունենալուց: Մինչդեռ ներկա իրողությունների պայմաններում՝ արբանյակային հեռարձակումը պիտի սահմանվեր ընդամենը որպես երկու տնտեսվարող սուբյեկտների՝ համապատասխան արբանյակային գործակալության եւ հեռարձակում իրականացնել ցանկացող ֆիզիկական կամ իրավաբանական անձի պայմանագրային հարաբերությունների խնդիր: Փաստորեն գործող օրենքով ՀՌԱՀ-ին իրավունք է վարապահված միջամտել այդ հարաբերություններին եւ արտոնել այնպիսի ռեսուրսից օգտվելու հնարավորությունը, որը բացարձակապես իր տնօրինությունից դուրս է:

ՀՀ Սահմանադրության փոփոխություններով նախատեսված է լայնացել Հեռուստատեսության եւ ռադիոյի Ազգային հանձնաժողովի իրավասությունների ոլորտը՝ դրա մեջ ներառելով հանրային հեռարձակման կարգավորումը եւ վերահսկողությունը: Սակայն օրինագիծը մշակողները հերթական անգամ առիթը չեն օգտագործել սահմանելու նման կարգավորման մեխանիզմները:

Ինչպես եւ նախկինում, չեն ապահովվում ՀՌԱՀ-ի կազմի հասարակական-քաղաքական բազմազանությունը, հասարակության մասնակցությունը ՀՌԱՀ-ի ձեւավորմանը, վերջինիս որոշումների ընդունման թափանցիկությունը: Եվ դա այն դեպքում, երբ նախագծի անցումային դրույթներով՝ այդ մարմնին վերապահվում է թվայնացման եւ հետագայում թվային հաճախականությունների օգտագործման հետ կապված ռազմավարական խնդիրների լուծումը:

8. Լիցենզավորման ենթակա հեռուստահեռարձակողների կոնկրետ թիվը, ըստ օրինագծի անցումային դրույթների, 18-ն է: Մեզ հայտնի չէ, թե արդյո՞ք ՀՀ-ում անցկացվել է հեռուստատեսային հաճախականությունների թափանցիկ եւ օբյեկտիվ աուդիտ: Վերջինիս ահրաժեշտության (մինչեւ թվայնացմանը գործնականում անցնելը) մասին նշել են նաեւ մի շարք միջազգային փորձագետներ: Մեր կարծիքով, նման աուդիտի արդյունքների հրապարակումից առաջ լիցենզավորման ենթակա հեռուստահեռարձակողների կոնկրետ թիվ սահմանող որեւէ դրույթ հիմնավորված չի կարող համարվել:

Մեզ հայտնի չէ նաեւ հասարակական պահանջարկի որեւէ լուրջ ուսումնասիրություն, առանց որի հնարավոր չէ սպառիչ կերպով սահմանել լիցենզավորման ենթակա հեռարձակողների ուղղվածությանները, ինչպես դա արված է նախագծի 47-րդ հոդվածով:

Բացի այդ, լիցենզիաների սահմանված թիվը ենթադրում է, որ ներկայումս գործող որոշ հեռուստաընկերություններ կզրկվեն լիցենզիաներից, դա իր հերթին նշանակում է, որ քիչ հավանական է դառնում նորերի՝ այդ թվում միգրացե արդեն իսկ թվային հեռարձակմանը պատրաստ ընկերությունների՝ շուկա մուտք գործելը:

9. Օրինագծում հստակեցում չկա տարածաշրջանային հեռուստաընկերությունների, այդ թվում հանրային «Շիրակ» հեռուստաալիքի ճակատագրի եւ լիցենզավորման մրցույթներին մասնակցության հարցում:

10. Վերջապես, այս օրինագծով եւս հեռարձակման լիցենզավորման մրցույթների անցկացման պայմաններն ու ընթացակարգերը հստակեցված չեն, եւ դա կրկին վերապահված է ՀՌԱՀ-ին: Այս պայմաններում, երբ մրցույթների հայտարարմանը մնացել է 2 ամիս, ընկերությունները շարունակում են մնալ անորոշ վիճակում:

Գիտակցելով, որ օրինագծի ընդունումը հրատապ է, այսուհանդերձ համարում ենք, որ կառավարությունը չի ապահովել դրա պատշաճ որակը, եւ այդ պայմաններում՝ անհրաժեշտ հասարակական, փորձագիտական քննարկում: Ելնելով վերը նշված դիտողություններից՝ կոչ ենք անում ՀՀ Ազգային ժողովին, օրինագիծը չընդգրկել մայիսի 17-ին սկսվող հերթական քառօրյա նիստերի օրակարգում, կազմակերպել դրա խորհրդարանական լսումներ, որի ժամանակ պատրաստ կլինենք ներկայացնել մանրամասն վերլուծություն եւ առաջարկություններ: Միայն համապատասխան քննարկումներից եւ փորձաքննությունից հետո հիշյալ նախագիծը կարող է քննարկվել Ազգային ժողովի նիստում:

Երևանի մամուլի ակումբ

Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե

Մամուլի աջակցության «Ինտերնյուս» ՀԿ